ԻԶ. ՉԱՐԵՆՑԻՆ

թարգմանություն

Իզաբելլա,

Հանձնիր Ավետիքին, բայց այնպես, որ ոչ ոք բացարձակապես չիմանա և չտեսնի: Ասա նրան, որ կարդալուց հետո ոչնչացնի, կամ, եթե ուզենա պահել-պահի այնպես, որ ոչ ոք չիմանա, և որ բացարձակապես ոչ ոքի ցույց չտա:

Ողջույն: Ինչպես եմ ես կարոտում քեզ, Բոժիկին, Ադոկին… Է, լավ է չգրեմ: Աստծով կհանդիպենք իրար:

Ամուր եղիր, հարազատս,-եթե նույնիսկ փողոց գցեն: Չէ որ միայն մենք չենք տառապում, այլ շատ շատերը, նույնպիսի մարդիկ, ինչպես մենք ենք: Միայն աշխատիր պահել քեզ ու երեխաներին,-ես քեզանից պահանջում եմ միայն դա: Թող աստված ձեզ պահապան լինի,- չէ որ մենք հարազատս, ոչ ոք չունենք:

Համբուրում եմ ձեզ շատ, բյուր միլիոն անգամ և ավելին:

Ձեր՝ Չարենց

6 X, 1937, բանտ